

Տեղեկատվական թերթիկ

Պահպանվող տարածքների մասնակցային կառավարման հնարավորությունները. «Սևան» և «Դիլիջան» ազգային պարկեր

Հայաստանյան փոխակերպվող հասարակության տնտեսական և սոցիալական հիմնախնդիրները մարդկանց մոտ բնապահպանական գիտակցության ցածր մակարդակի արմատավորման պատճառ են հանդիսացել: Իրավիճակն իր անմիջական դրսևորումն է ունեցել նաև Ազգային պարկերի կառավարման գործընթացի վրա, մասնավորապես Գեղարքունիքի և Տավուշի մարզերում «Սևան» և «Դիլիջան» ազգային պարկերի հարակից համայնքների բնակիչներն ավելի ինտենսիվորեն են օգտագործել բնական պաշարները, ինչն անխուսափելիորեն իր բացասական անդրադարձն է ունեցել պահպանվող տարածքների կենսաբազմազանության վրա: Հարցի տվյալ ենթատեքստում առանձնակի կարևորվում է բնակիչների կողմից որոշումների կայացման և հետագայում դրանց իրականացման գործընթացներին մասնակցելու անհրաժեշտության գիտակցումը: Համայնքներում մասնակցային կառավարման գիտակցության բացակայությունը պայմանավորված է խորհրդային ժամանակներից ժառանգություն ստացած պետական կառավարման կենտրոնացված համակարգի՝ որպես քաղաքացուց անկախ գործող կառույցի վերաբերյալ ձևավորված մոտեցումներով: Ընդ որում՝ դրանք գործում են նաև Ազգային պարկի կառավարող մակարդակում, ըստ որի Ազգային պարկը պետք է իրականացնի մենաշնորհային հսկողություն պահպանվող տարածքներում:

Արդյունքում՝ ժողովրդավարացման ուղին բռնած հասարակությունում շարունակում է իր վճռորոշ դերն ու նշանակությունը պահպանել կառավարման ավանդական եղանակը, ինչն իրականացվում է «վերևից ներքև» սխեմայով: Սակայն միջազգային փորձը ցույց է տալիս, որ պահպանվող տարածքների առավել արդյունավետ կառավարումը ենթադրում է բնակիչների ակտիվ մասնակցություն բնական պաշարների պահպանության գործում: Իսկ դա նշանակում է, որ կառավարման գործընթացում պետք է ապահովվի անընդհատ կապ վերին և ստորին օղակների միջև, ինչը ենթադրում է տեղեկատվության հոսք «ներքևից վերև» և հակառակը: Ուստի խիստ կարևոր է, որպեսզի Ազգային պարկերի հարակից համայնքների բնակչությունը ոչ միայն գիտակցի բնության արժեքն ու բնությունը չվնասելու անհրաժեշտությունը, այլ նաև իրեն պատասխանատու զգա դրա պահպանության համար:

Վերջին տարիներին Հայաստանն ընդունել է մի շարք օրենքներ և նորմատիվային ակտերը բնապահպանական որոշումներ ընդունելիս հասարակության մասնակցության մասին: Այս ասպարեզում կարևոր նվաճումներից մեկն է Օրհուսի Կոնվենցիան¹, որը 2001 թվին վավերացվել է Հայաստանի կողմից: Համաձայն կոնվենցիայի՝ որոշումների ընդունումը պետք է լինի ավելի բաց և թափանցիկ: Այն սահմանում է քաղաքացիների իրավունքներ երեք ասպարեզներում՝ 1.տեղեկատվություն ստանալու իրավունք, 2.որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության իրավունք, 3.արդարադատության մատչելիություն:

¹ «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա. 1998թ. հունիս 23-25 (Օրհուս, Դանիա): Կոնվենցիան Հայաստանի կողմից ստորագրվել է 1998թ հունիսի 25-ին, վավերացվել է 2001թ. մայիսի 14-ին:

Այսօր, խոսելով պահպանվող տարածքների մասնակցային կառավարման գործընթացում հարակից համայնքների ներգրավման մասին, անհրաժեշտ է դիտարկել տեղական ինքնակառավարման մարմիններին ու բնակիչներին փոխկախվածության մեջ՝ ապահովելով կառավարման գործընթացի համակարգվածությունը: Ազգային պարկի պահպանվող տարածքների մասնակցային կառավարման գործընթացի արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է ձևավորել «Ազգային պարկ - Համայնք» համագործակից և փոխվերահսկող համակարգ: Տվյալ պարագայում կառավարման գործընթացում պետք է ներգրավված լինեն ինչպես առանձին բնակիչներ՝ ռեսուրսների անմիջական օգտագործողներ, այնպես էլ Տեղական ինքնակառավարման մարմիններ՝ Ազգային պարկի տարածքների նկատմամբ լիազորությունների հավակնորդներ: Սակայն գործընթացի համարժեք սկիզբ և հաջող շարունակություն ապահովելու համար ենթադրվում է արմատական փոփոխություններ կատարել կողմերի ելակետային դիրքորոշումներում:

Եթե սկսենք պատճառներից, ապա պետք է նշել, որ բնակիչների մասնակցությանը մեծապես խոչընդոտում է բնապահպանական իրազեկության պակասը, ուստի շատ կարևոր բնապահպանական տեղեկատվության հասանելիության ապահովումը: Հետևաբար՝ խիստ կարևորվում է համագործակցությունը ոչ միայն Ազգային պարկի և ՏԻՄ-ի, այլ նաև Ազգային պարկի և հասարակական կազմակերպությունների միջև: Վերջիններս, մի կողմից՝ կարող են հանդես գալ որպես համայնքային շահեր ներկայացնող, մյուս կողմից էլ՝ որպես բնապահպանական գործունեություն ծավալող կառույցներ: Հասարակական սեկտորի արդյունավետ և նպատակաուղղված գործունեության համար անհրաժեշտ է.

- Ազգային պարկերի տեղեկատվական բազայի հասանելիության ապահովում;
- Պահպանվող տարածքների կառավարման գործընթացում օրենսդրական փոփոխություններից և այլ կարգի որոշումների կայացումից առաջ հանրային լսումների կազմակերպում ՀԿ-ների ներգրավմամբ;
- ՀԿ-ների համակարգող խորհրդի ձևավորում, ինչպես նաև Ազգային պարկի գիտական խորհրդում ՀԿ-ների ներկայացուցչության ապահովում:

Իբրև մասնակցային կառավարման համակարգի կայացման կարևոր նախապայման, անհրաժեշտ է փոփոխություններ իրականացնել նաև Ազգային պարկի կառավարման համակարգում: Իրականացված հետազոտությունները թույլ են տալիս պնդել, որ Ազգային պարկերը որոշ համայնքներում կորցրել են իրենց հանդեպ ունեցած վստահությունը: Դա մի կողմից պայմանավորված է խիստ հսկողությամբ, մյուս կողմից՝ տեսչական համակարգում առկա վրիպումներով, ոչ արդյունավետությամբ և որոշ դեպքերում էլ՝ կոռումպացվածությամբ: Հետևաբար անհրաժեշտ է վերականգնել վստահությունը Ազգային Պարկի նկատմամբ՝ առկա թերացումները շտկելու միջոցով:

Տեղական ինքնակառավարման մարմինների դերը կարևորելիս պետք է ՏԻՄ-ը դիտարկել որպես կառավարման պլանների մշակման, հաստատման և իրականացման գործընթացներում մասնակից և համապատասխան պարտավորությունների կրող: Հատկապես անհրաժեշտ է ընդգծել ՏԻՄ-երի դերը ու մասնակցությունը Ազգային պարկի մասին տեղեկատվության հավաքման և տարածման գործընթացներում:

Ազգային պարկի մասնակցային կառավարման գործընթացում համայնքների աստիճանաբար ներգրավման համար անհրաժեշտ է լուծել մի կողմից սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, մյուս կողմից՝ բարձրացնել բնակչության էկոկրթության և իրազեկության մակարդակը՝ զուգահեռաբար նաև՝ մասնակցության գիտակցության աստիճանը:

Որպես համայնքային իրազեկության և մասնակցության աստիճանի բարձրացման միջոց կարող են հանդես գալ.

- ԱՊ-ի կողմից բնապահպանական միջոցառումներին և իրականացվող այլ գործողություններին /բնական պաշարների պահպանություն, վերականգնման աշխատանքներ, սանիտարական հատումներ և ծառատունկ, գնահատում և դիտանց/ հարակից համայնքների բնակիչների ներգրավումը;
- Էկոլոթական միջոցառումների կազմակերպումը /դպրոցական դասագրքերի և ուսուցողական բրոշյուրների տպագրում, էքսկուրսիաների, սեմինարների, էկոլոթական դասընթացների կազմակերպում/:
- ԱՊ-ի հարակից տարածքների հանդեպ սեփականության զգացում ձևավորող միջոցառումների կազմակերպումը:

Որպես բնապահպանական տեղեկատվության տարածման միջոց կարող են հանդես գալ ինչպես զանգվածային լրատվության և էլեկտրոնային հաղորդակցության միջոցները, այնպես էլ հասարակական լուսմների կազմակերպումը: Ընդ որում՝ տեղեկատվության տարածումը պետք է իրականանա ԱՊ-ի, ՏԻՄ-ի, պետական կառավարման տարածքային մարմնի և ՀԿ-ների հետ համատեղ ջանքերով:

ԱՊ-ի մասնակցային կառավարման համակարգի ձևավորումը թեև հանդիպում է մի շարք խոչընդոտների, սակայն այն չի կարելի որակել որպես անիրագործելի գործընթաց, քանի որ տարածաշրջանում կան կայուն մասնակցային կառավարման համակարգի կայացման նախապայմաններ և վերոհիշյալ միջոցառումների իրականացումը կարող է լուրջ խթան հանդիսանալ համակարգի կայացման համար:

Լիլիթ Հովհաննիսյան
Պահպանվող տարածքների կառավարման
և կենսաբազմազանության սոցիալ-տնտեսական
ուսումնասիրությունների խմբի ղեկավար

Հրատարակվում է Բնական պաշարների կառավարման և
չքավորության նվազեցման ծրագրի շրջանակում



«Աջակցություն բարեփոխումներին» ՀԿ
www.reforms.am

տպաքանակը՝ 5 000